ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

12 մարտի 2021 թվականի թիվ 42-Ա

ք. Երևան

«ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով 2021 թվականի փետրվարի 09-ին իր նախաձեռնությամբ հարուցված թիվ 2 վարչական վարույթի նյութերը՝ ***պարզեց.***

Հանձնաժողովը «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) վերապահված իր վերահսկողական գործառույթներն իրականացնելիս՝ տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի տվյալների ստուգման արդյունքում արձանագրել է լսողական մեդիածառայություն մատուցող «ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Հեռարձակող) կողմից «Ռադիո Ավրորա» լսողական ծրագրի հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի վարման կարգի խախտում:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով՝ 2021 թվականի փետրվարի 09-ին Հեռարձակողի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ հիմք ընդունելով Հանձնաժողովի կողմից Հեռարձակողի լսողական ծրագրի հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի տվյալների ստուգման արդյունքում 2021 թվականի փետրվարի 09-ին կազմված արձանագրությունը:

Հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության վերահսկողության բաժնի կողմից 2021 թվականի փետրվարի 08-ին իրականացվել է տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի տվյալների ստուգում և ստուգման արդյունքում 2021 թվականի փետրվարի 09-ին կազմվել է արձանագրություն, համաձայն որի՝ Հեռարձակողի կողմից չի ներբեռնվել 2021 թվականի հունվար ամսվա հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի տվյալները՝ դրանով իսկ խախտելով տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի վարման կարգը:

Նշված արարքը համապատասխանում է Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի և Հանձնաժողովի 2020 թվականի դեկտեմբերի 29-ի «Տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի ձևը և վարման կարգը սահմանելու մասին» թիվ 154-Ա որոշմամբ սահմանված դրույթների հատկանիշներին:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի մասին 2021 թվականի փետրվարի 10-ին ծանուցել է Հեռարձակողին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները և բացատրությունները:

Հարուցված վարչական վարույթի ընթացքում Հեռարձակողը 2021 թվականի փետրվարի 17-ին Հանձնաժողով ներկայացված իր պարզաբանումներում, հայտնում է այն մասին, որ հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի ներբեռնումն իրենք սկսել են դեռևս 2020 թվականի դեկտեմբերին, սակայն առաջացել էին որոշ տեխնիկական խնդիրներ, որոնք խոչընդոտել են իրենց հետագա գործընթացը:

Հեռարձակողը նշում է, որ խնդիրներն առաջացել էին մասնավորապես այն պատճառով, որ իրենց բոլոր համակարգիչները (այդ թվում նաև այն համակարգիչը, որի վրա իրենք ներբեռնել են էլեկտրոնային մատյանի ծրագիրը) միավորված են մեկ եթերային հատուկ համակարգով և էլեկտրոնային մատյանի ծրագրի ներբեռնումն առաջացրել է խնդիրներ նշված համակարգում գտնվող բոլոր համակարգիչների համար:

Հեռարձակողն իր պարզաբանման մեջ նշել է նաև, որ ձեռնարկվել է մի քանի փորձ ներբեռնել ծրագիրը այլ համակարգիչների մեջ, սակայն ապարդյուն և խնդրի մասին տեղյակ է եղել Հանձնաժողովի աշխատակիցը:

Հեռարձակողն իր բացատրություններում պարզաբանում է, որ արդեն հաշվառման էլեկտրոնային մատյանի ծրագիրը ներբեռնել են նոր համակարգչի մեջ և փորձում են այն լրացնել և ուղարկել հաշվետվությունը՝ խնդրելով այս անգամ ընդառաջել և ի գիտություն ընդունել իրենց բացատրություններն ու պարզաբանումները:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լիցենզիա ստացած Հեռարձակողները պարտավոր են վարել տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյան, իսկ 2-րդ մասով սահմանված է, որ տեսալսողական հաղորդումները պետք է գրանցվեն կարգավորող պետական մարմնի համար հասանելիություն ունեցող տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանում, որի ձևը և վարման կարգը սահմանում է կարգավորող պետական մարմինը:

Օրենքի նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի տվյալների հիման վրա կարգավորող պետական մարմինը վերահսկում է Հեռարձակողների գործունեության համապատասխանությունը օրենսդրության պահանջներին: Կարգավորող պետական մարմինը ընտրանքային սկզբունքով իրականացնում է Հեռարձակողների կողմից հեռարձակվող տեսալսողական

տեղեկատվության մշտադիտարկումներ յուրաքանչյուր Հեռարձակողի համար ամսվա ընթացքում առնվազն հինգ օր: Մշտադիտարկման արդյունքները կարող են համադրվել հաշվառման էլեկտրոնային մատյանների տվյալներին:

Հանձնաժողովի 2020 թվականի դեկտեմբերի 29-ի «Տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի ձևը և վարման կարգը սահմանելու մասին» թիվ 154-Ա որոշման հավելվածի 10-րդ կետով սահմանվել է, որ պատասխանատու անձի կողմից տեսալսողական մեդիածառայություն մատուցողի կողմից հեռարձակված յուրաքանչյուր տեսալսողական հաղորդում մուտքագրվում է տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյան և ներբեռնվում է էլեկտրոնային գրանցամատյանի սերվեր ՝ ոչ ուշ քան հաշվետու ամիսը լրանալուց հետո մինչև հաջորդ ամսվա 5-ը:

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված և ներկայացրած փաստերը, որի արդյունքում հայտնի է դարձել, որ Հեռարձակողը չի ներբեռնել 2021 թվականի հունվար ամսվա լսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի տվյալները:

Այսպիսով, վարչական վարույթի նյութերի ուսումնասիրության և համադրման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է, որ Օրենքով և Հանձնաժողովի 2020 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 154-Ա որոշմամբ տեսալսողական մեդիածառայություն մատուցողների համար պարտավորություն է սահմանված՝ վարել տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյան, մասնավորապես՝ հեռարձակված յուրաքանչյուր տեսալսողական հաղորդում պետք է մուտքագրվի տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյան և ներբեռնվի էլեկտրոնային գրանցամատյանի սերվեր՝ ոչ ուշ քան հաշվետու ամիսը լրանալուց հետո մինչև հաջորդ ամսվա 5-ը, սակայն Հեռարձակողի կողմից չի ներբեռնել 2021 թվականի հունվար ամսվա լսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի տվյալները, դրանով իսկ խախտելով Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի և Հանձնաժողովի 2020 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 154-Ա որոշման պահանջը:

Փաստում ենք նաև, որ Հեռարձակողը հանդիսանում է լսողական մեդիածառայություն մատուցող, որը հեռարձակում է լսողական հաղորդումներ և պարտավոր է պահպանել տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջները, իսկ օրենքի դրույթները խախտելու դեպքում կրել պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով, ուստի, օրենքով արգելված արարքի կատարումն ինքնին բերում է պատասխանատվության:

Հեռարձակողը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելը առաջացնում են իրավական հետևանքներ և Հեռարձակողը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության կիրառման ապահովման համար և տվյալ դեպքում Հեռարձակողը պարտավոր էր պահպանել Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով և Հանձնաժողովի 2020 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 154-Ա որոշմամբ սահմանված դրույթների պահանջները:

Հեռարձակողի կողմից նշված այն փաստը, որ Հանձնաժողովի աշխատակիցը տեղյակ է եղել իրենց խնդրի մասին բավարար փաստարկ չէ Հեռարձակողի նկատմամբ օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն չկիրառելու համար: Ավելին, տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի տեղեկատվական համակարգի փորձնական տարբերակը գործարկվել է դեռևս 2020 թվականին և մի շարք լիցենզիա ստացած տեսալսողական մեդիածառայություն մատուցողների մոտ նույնպես խնդիրներ առաջացել են, սակայն կարճ ժամկետում հարթել են այդ խնդիրը և վարել են տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյան և սահմանված ժամկետում տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի տվյալները ներբեռնել են տեղեկատվական համակարգ:

Նշված խախտումը համապատասխանում է Օրենքի 57-րդ հոդվածի 15-րդ մասի հատկանիշներին:

Սակայն, Հանձնաժողովի նիստին՝ վարույթի քննարկմանը, մասնակցում էր նաև Հեռարձակող ընկերության տնօրենը և վարույթի քննարկման ընթացքում տնօրենը ևս մեկ անգամ հաստատեց իրենց կողմից գրավոր ներկայացված բացատրությունները և պարզաբանում տվեց այն մասին, որ հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի ներբեռնման հետևանքով առաջացած տեխնիկական խնդիրները, որոնք խոչընդոտել են իրենց աշխատանքին առաջացել են ոչ Հեռարձակողի մեղքով և նշվածի համար որպես հավաստում ներկայացրել է հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի տեղեկատվական համակարգից տեխնիկական անհամապատասխանությունը հավաստող ապացույց: Միաժամանակ, տնօրենը նշեց, որ Հեռարձակողի կողմից արդեն իսկ հարթվել են էլեկտրոնային մատյանի ծրագրի ներբեռնման հետ կապված խնդիրները և վերականգնվել են 2021 թվականի հունվար ամսվա հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի տվյալների մեծ մասը, իսկ փետրվար ամսվա հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի տվյալները ներբեռնվել են ամբողջական:

Հանձնաժողովն ընդմիջելով նիստը՝ ուսումնասիրել է նիստի ընթացքում ներկայացված ապացույցները և համադրելով այն սույն գործի հետ կապված փաստական հանգամանքների հետ, արձանագրել է, որ հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի ներբեռնման տեխնիկական խնդիրներն առաջացել են ոչ Հեռարձակողի մեղքով:

Այսպիսով, Հանձնաժողովը հաշվի առնելով, որ էլեկտրոնային մատյանի ներբեռնման տեխնիկական խնդիրներն առաջացել են ոչ Հեռարձակողի մեղքով և նաև այն փաստը, որ Հեռարձակողի կողմից արդեն իսկ ներբեռնվել են հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի տվյալները, ուստի վերլուծելով և գնահատելով սույն գործի հետ կապված փաստական հանգամանքները, ամրագրում է, որ Հեռարձակողի նկատմամբ հարուցված թիվ 2 վարչական վարույթը ենթակա է կարճման:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի բ) կետի համաձայն՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը կարող է կարճվել, եթե՝

բ) օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումների կամ դրանց կանխման հետ չկապված հարցով իրավիճակի փոփոխման կամ օրենքով նախատեսված այլ հիմքով վերացել է վարչական ակտի ընդունման անհրաժեշտությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով, Հանձնաժողովի 2020 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 154-Ա որոշմամբ և հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի բ) կետը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշեց.***

1. Կարճել «ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» ՍՊ ընկերության նկատմամբ հարուցված թիվ 2 վարչական վարույթը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» ՍՊ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

12 մարտի 2021թ.
ք. Երևան